

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ No. 24989/09

«Ճշմարիտ հավատք» կրոնական կազմակերպությունն

ընդդեմ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 34-ՐԴ ՀՈԴՎԱԾՈՎ  
ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳԱՆԳԱՏԻ ՀԱՎԵԼՎԱԾ

Բացառապես. *«Ինտերակտիվ մարդու իրավունքներ»* Եվրոպական  
*իրավունքի* 2009-2010 թթ դատախաղ-մրցույթի նպատակների համար

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I.	ԴԱՏԱԽԱՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ .....	3
II.	ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ .....	5
III.	ՓԱՍՏԵՐԻ ՇԱՐԱԴՐԱՆՔԸ .....	7
1)	Գործի քննությունը ընդհանուր իրավասության դատարանում .....	10
2)	Վարույթը վերաքննիչ քաղաքացիական դատարանում .....	12
3)	Վարույթը վճռաբեկ դատարանում .....	14
IV.	ԴԻՄՈՒՄԱՏՈՒԻ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԱՆՔԻ ՇԱՐԱԴՐԱՆՔԸ ....	18

## I. ԴԱՏԱԽԱՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

1. «Ինտերակտիվ մարդու իրավունքներ» Եվրոպական իրավունքի 2009-2010 թթ. դատախաղ-մրցույթը կազմված է մտացածին փաստերի և իրադարձությունների հիման վրա: Դատախաղ-մրցույթի գործի իրադարձությունները տեղի են ունեցել Հայաստանի Հանրապետությունում և գործի նկատմամբ գործում է Հայաստանի Հանրապետությունում մինչև 2009 թվականի մայիսի 31-ը գործող օրենսդրությունը:
2. «Ինտերակտիվ մարդու իրավունքներ» Եվրոպական իրավունքի 2009-2010 թթ. դատախաղ-մրցույթն իրականացվելու է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի առջև՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի և կից Արձանագրությունների (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա կամ Կոնվենցիա) և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կանոնակարգի (այսուհետ՝ Եվրոպական դատարանի կանոնակարգ) համաձայն: Դատախաղ-մրցույթի ժամանակ Դիմումատուն և Պատասխանող մասնակից պետությունն իրենց գրավոր փաստարկները մշակելիս և ներկայացնելիս պետք է առաջնորդվեն Հայաստանի Հանրապետությունում մինչև 2009 թվականի մայիսի 31-ը գործող օրենսդրությամբ, ինչպես նաև Եվրոպական կոնվենցիայով, Եվրոպական Դատարանի վճիռներով, միջազգային և սովորութային իրավունքի հանրաճանաչ նորմերով և սկզբունքներով ինչպես նաև համապատասխան այլ փաստաթղթերով:
3. Դատախաղ-մրցույթին մասնակցող բոլոր թիմերը պետք է առաջնորդվեն սույն ցուցումներով և ընթացակարգով, Դատախաղ-մրցույթի դատական գործով, ինչպես նաև «Ինտերակտիվ մարդու

իրավունքներ» 2009-2010 թթ. եվրոպական իրավունքի դատախազ-  
մրցույթի Պաշտոնական կանոններով:

## II. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

4. «Ինտերակտիվ մարդու իրավունքներ» Եվրոպական իրավունքի դատախազ-մրցույթի գործի համար առիթ է հանդիսացել Կոնվենցիայի 34-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետությանում գրանցված և գործող «Ճշմարիտ հավատք» կրոնական կազմակերպության կողմից 2009 թվականի հուլիսի 14-ին ընդդեմ Հայաստանի Հանրապետության Եվրոպական դատարան ներկայացված գանգատը (N: 24989/09):
5. 2009 թվականի սեպտեմբերի 10-ին գանգատը փոխանցվում է Դատարանի Երրորդ բաժանմունք՝ Եվրոպական դատարանի Կանոնակարգի 52-րդ կանոնի 1-ին կետի համաձայն: Այդ Բաժանմունքում, Եվրոպական դատարանի Կանոնակարգի 26-րդ կանոնի 1-ին կետի համաձայն ձևավորվում է Պալատ՝ գործի քննությունն ապահովելու համար (Կոնվենցիայի 27-րդ հոդվածի 1-ին մաս):
6. 2009 թվականի դեկտեմբերի 10-ին -ի որոշմամբ Դատարանը գանգատն ընդունելի է հայտարարում:
7. Դիմումատուն և պատասխանող կառավարությունը հրավիրվում են ներկայացնելու իրենց գրավոր առարկությունները (կանոն 59-ի 1-ին կետ): Սույն դատախազի իմաստով գրավոր առարկություններն են հանդիսանում մրցույթի Պաշտոնական կանոններով և ժամանակացույցով սահմանված կարգով և ժամկետներում մասնակից թիմերի կողմից սույն փաստաթղթի հիմնված գլխում սահմանված հարցերի (համապատասխանաբար դիմումատուի և պատասխանող կառավարության համար) կապակցությամբ ներկայացված գրավոր փաստարկները:

8. 2010 թվականի հունվարի 11-ին Դատարանը որոշում է «Ճշմարիտ հավատք» կրոնական կազմակերպության կողմից ներկայացված գանգառի ըստ էության քննության նպատակով 2010 թվականի փետրվարի 10-ին բանավոր լսումներ հրավիրել՝ Եվրոպական դատարանի կանոնակարգի 59-րդ կանոնի 2-րդ կետի համաձայն:

### III. ՓԱՍՏԵՐԻ ՇԱՐԱԴՐԱՆՔԸ

1. «Ճշմարիտ հավատք» կրոնական կազմակերպությունը (այսուհետ՝ նաև «Կազմակերպություն») Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված կարգով գրանցվել է 2005 թվականին: Այն բավականին ճանաչված կազմակերպություն է, որի գաղափարախոսությունը լայն տարածում ունի Հայաստանում: Կրոնը, որի հետևորդներ են հանդիսանում Կազմակերպության անդամները, որոշակիորեն տարբերվում է Հայ Առաքելական Եկեղեցու ուսմունքից: «Ճշմարիտ հավատք» կրոնական կազմակերպությունը Հայաստանում գործող կրոնական կազմակերպություններից առավել հայտնիներից է: Չնայած հայտնի լինելուն, Կազմակերպությունը և դրա գաղափարախոսությունը երկրի բնակչության գերակշռող մասի կողմից չեն ընդունվում:
2. «Հայ Ազգ» միությունն (այսուհետ՝ նաև «Միություն») իրենից մի շարք կազմակերպությունների, խմբերի ու անհատների միություն է ներկայացնում, որն ակտիվ գործունեություն է ծավալում Հայաստանում հասարակական կյանքի տարբեր բնագավառներում: Միությունը ևս բավականաչափ հայտնի է Հայաստանում և վայելում է հասարակության մի զգալի զանգվածի վստահությունը: Միության և դրա անդամների թիվն, ըստ պաշտոնական տվյալների, անցնում է 200.000-ը: Միության հիմնադիրներից մեկը միաժամանակ հանդիսանում է նաև Հայաստանում իշխանական կուսակցության անդամ:
3. Միությունը հրապարակում է «Առօրյա» անվանմամբ շաբաթաթերթ (այսուհետ՝ նաև «Շաբաթաթերթ»), որը տարածվում և վաճառվում է Հայաստանի ամբողջ տարածքում: Այն բավականին հայտնի շաբաթաթերթ է և հրապարակվում է առնվազն 50.000 օրինակ. ըստ վիճակագրական տվյալների բոլոր համարները սպառվում են:
4. Պողոս Պողոսյանը 2000 թվականից աշխատել է Շաբաթաթերթում որպես գլխավոր խմբագիր: Նա նաև Կազմակերպության առաջին անդամներից է եղել:

5. Կրոնը, որի հետևորդներն են հանդիսանում Կազմակերպության անդամները, իր ուսմունքում մեծ տեղ ու նշանակություն է տալիս կրոնական ծիսակատարություններին: Ծիսակատարությունները երկու տեսակ են. սովորական, որին մասնակցում են Կազմակերպության բոլոր անդամները և Փակ ծիսակատարություններ, որոնց իրավունք ունեն մասնակցելու միայն Կազմակերպության մկրտված անդամները, ովքեր առնվազն երեք տարի Կազմակերպության բարձրաստիճան կրոնավորի հովանավորությամբ ուսումնասիրել են Կրոնի սուրբ գիրքը և քարոզները:
6. Պողոս Պողոսյանը եղել է այդպիսի մկրտված անդամ ու սկսած 2005 թվականից մասնակցել է բոլոր Փակ ծիսակատարություններին:
7. 2009 թվականի հունվարին, Պողոս Պողոսյանը որոշում է դուրս գալ Կազմակերպության անդամությունից և գրավոր դիմում է ներկայացնում Կազմակերպության նախագահին, որը նաև Կազմակերպության անդամների հոգևոր և վարչական առաջնորդն է: Իր գրավոր դիմումում Պողոս Պողոսյանը հիմնավորում է իր այդ քայլը նրանով, որ փոխվել են իր հոգևոր ու կրոնական գաղափարախոսական մոտեցումները: Կազմակերպության նախագահը ընդունում է Պողոս Պողոսյանի դիմումը և հետևաբար 2009 թվականի հունվարից նա դադարում է Կազմակերպության անդամ լինելուց: Սակայն նա այնուամենայնիվ շարունակում էր հետաքրքրվել Կազմակերպության գործունեությամբ և 2009 թվականի մարտ ամսվա սկզբին որոշում է Շաբաթաթերթում հոդված տպագրել Կազմակերպության մասին:
8. Փորձելով մանրամասն ներկայացնել այն հավատքի էությունը, որը դավանում են Կազմակերպության անդամները, Պողոս Պողոսյանը իր հոդվածի հիմնական մասը նվիրում է Փակ ծիսակատարությունների նկարագրությանը, որոնց ինքը բազմիցս մասնակցել էր: Բացի Ծիսակատարության նկարագրությունց, տպագրման նախատեսվող հոդվածը պարունակում էր նաև հետևյալ նախադասությունները. «Եվ այսպես, սիրելի հայրենակիցներ և համաքաղաքացիներ, ***զգուշացե՛ք և հեռու մնացե՛ք*** աղանդներից և այլ նմանատիպ շարժումներից,

ինչպիսիք են օրինակ «Ճշմարիտ հավատք» կազմակերպությունը, որոնք աղավաղում են մեր ազգային ինքնագիտակցությունը: Այդ կազմակերպություններն ու դրանց հոգևոր և վարչական առաջնորդներն իրենց նեղ շահերի համար փորձում են ձեզ վերածել ստրկամիտ, նյութապաշտ, իր հոգևոր արմատներն ուրացող ազգային ավանդույթները դավաճանող, ազատ մտածելու կարողություն չունեցող, իրենց քաղաքացիական պարտքից խույս տվող և Հայ Առաքելական Եկեղեցու միակ ճշմարիտ ուսմունքը հերքող ամբոխի: Այդպիսին են «Ճշմարիտ հավատք» կազմակերպության անդամներն ու համախոհները, այդպիսին կլինեք նաև դուք, եթե զերծ չմնաք դրա ազդեցությունից և թույլ տաք ձեզ էլ ներգրավվել Կազմակերպության անդամների շարքերը, կամ դառնաք գործիք Կազմակերպության համար»:

9. Այդ Փակ ծիսակատարությունները, սովորաբար, անցկացնում են փակ վայրերում: Կրոնի հետևորդները անառարկելիորեն հավատում են, որ Փակ ծիսակատարությունն ունի առանձնահատուկ հոգևոր խորհուրդ, որին մասնակցել կարող են միայն Կազմակերպության մկրտված անդամները: Փակ ծիսակատարության մասնակիցները Ծիսակատարության ընթացքում որոշակի հոգևոր փոխադարձ կապի մեջ են մտնում միմյանց, ու որ ամենակարևորն է, իրենց Աստծու հետ: Համաձայն «Ճշմարիտ հավատք» կրոնի Սուրբ Գրքի Արգելվում է Փակ ծիսակատարության, դրա ընթացքի և բովանդակության վերաբերյալ դրան չմասնակցած անձանց հայտնելը: Արգելվում է նաև այդպիսի տեղեկությունների հրապարակումը կամ տրամադրումը երրորդ անձանց ցանկացած ձևով կամ եղանակով, անկախ այն հանգամանքից, թե որքան ժամանակ է անցել Փակ ծիսակատարության անցկացումից: Այդպիսի հրապարակումը կամ Փակ ծիսակատարության մասին որևէ տեղեկության հայտնի դառնալը երրորդ անձանց վիրավորանք է Կազմակերպության անդամների կրոնական հանգումներին:

10. Հրատարակչությունում, որտեղ նախատեսվում էր տպագրել հոդվածը, աշխատում էր կազմակերպության անդամներից մեկը: Նա հոդվածի տպագրման լուրը և դրա մեկ օրինակ տալիս է Կազմակերպությանը:

*1) Գործի քննությունը ընդհանուր իրավասության դատարանում*

11. 2009 թվականի մարտի 12-ին, «Ճշմարիտ հավատք» կրոնական կազմակերպությունը դիմում է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան պահանջելով արգելել Պողոս Պողոսյանի կողմից պատրաստված հոդվածի տպագրումը: Կազմակերպությունը մասնավորապես պնդում էր, որ կրոնի ազատության իրավունքը երաշխավորվում է ինչպես Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով: Ըստ կրոնական կազմակերպության, կրոնի ազատության իրավունքը ներառում է նաև մարդու կրոնական հանգձունքները հարգելու իրավունքը, և հետևաբար, պետք է բացառվեն այն գործողությունները, որոնք վիրավորում են այդ հանգձունքները:
12. Կազմակերպությունը պնդեց, որ հոդվածը, որ նախատեսվում է հրապարակել նկարագրելու է իրենց հավատքի Փակ ծիսակատարությունները, ինչը իրենց Սուրբ Գրքի համաձայն արգելվում է և դա վիրավորանք է իրենց կրոնի յուրաքանչյուր հետևորդի համար: Կազմակերպությունը նշեց, որ ինքն իրավունք ունի և միաժամանակ պարտավոր է նաև պաշտպանել իր անդամների օրինական շահերն ու իրավունքները և այս հայցն այդ թվում նաև իր անդամների իրավունքների պաշտպանությանն է ուղղված:
13. Կազմակերպությունը պնդեց, որ պետությունը պոզիտիվ պարտավորություն ունի ապահովելու իր և իր անդամների կրոնի ազատության իրավունքը և միաժամանակ երաշխավորել, որպեսզի իրենց նկատմամբ քննադատությունը դուրս չգա ողջամտության, ու հետևաբար նաև, օրենքով թույլատրելի սահմանները ու չվերածվի վիրավորանքի:
14. Այս առումով վկայակոչելով նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 19-րդ հոդվածի դրույթները, պահանջեց պարտավորեցնել Շաբաթաթերթին հետ կանչել հոդվածը և չհրապարակել այն:

15. Շաբաթերթը առարկեց, որ թերթը կամ նրա գլխավոր խմբագիրը չեն հանդիսանում «Ճշմարիտ հավատք» կրոնական կազմակերպության անդամ կամ Կազմակերպության անդամների դավանած կրոնի հետևորդ, ու հետևաբար պարտավոր չեն պահպանել իրենց Սուրբ Գրքի կանոնները: Շաբաթաթերթը պնդեց, որ Կազմակերպության կամ նրա անդամների կրոնական համոզմունքները վիրավորելու մտադրություն չեն ունեցել և իրականացրել են միայն Շաբաթաթերթի գլխավոր խմբագրի խոսքի ազատության իրավունքը, որը ևսերաշխավորված է Սահմանադրությամբ և Եվրոպական կոնվենցիայով:
16. Կողմերը Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանում իրենց գործով քննությանը մասնակցում էին առանց փաստաբանների և դատարանում իրենց իրավունքներն անձամբ էին պաշտպանում:
17. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը իր 2009 թվականի ապրիլի 9-ի վճռով «Ճշմարիտ հավատք» կրոնական կազմակերպության հայցը բավարարեց և արգելք դրեց Շաբաթաթերթում հոդվածի հրապարակման վրա:
18. Դատարանն իր հիմնավորումներում մասնավորապես նշեց. «Այն հոգևոր նշանակությունը, որ Կազմակերպության ու նրա անդամների համար ունի Փակ ծիսակատարությունը, ինչպես նաև այն խորհուրդը, որ կրում է Ծիսակատարությունը, նրանց կրոնի տեսանկյունից բավարար են, որպեսզի հանրության այլ անդամները, անկախ իրենց վերաբերմունքից, հարգեն այդ խորհուրդն ու նշանակությունը: Նրանց Սուրբ Գրքի, կրոնական ուսմունքի ու գաղափարախոսության համաձայն Փակ ծիսակատարությունը հոդվածում լուսաբանելը մեղք է ու վիրավորանք իրենց հոգևոր արժեքների նկատմամբ: Ու հետևաբար, հանրությունը պարտավոր է հարգել նաև այդ հոգևոր արժեքը: Դատարանը գտնում է, որ հոդվածի հրապարակման փաստն, ինքին, արդեն կխախտեր Կազմակերպության անդամների կրոնի ազատության իրավունքը՝

վիրավորանք հասցնելով նրանց կրոնական համոզմունքներին ու արժեքներին»:

**2) Վարույթը Վերաքննիչ քաղաքացիական դատարանում**

19. Շաբաթաթերթը Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի վճիռը 2009 թվականի ապրիլի 16-ին բողոքարկեց վերաքննության կարգով, պնդելով որ ընդհանուր իրավասության դատարանը թույլ է տվել նյութական նորմերի էական խախտումներ, որոնք որոշիչ նշանակություն են ունեցել գործի ելքի համար: Վերաքննիչ քաղաքացիական դատարանում Շաբաթաթերթին, ի տարբերություն ընդհանուր իրավասության դատարանում քննությանը, ներկայացնում էին երեք փաստաբաններ, ովքեր Հայաստանի առավել հայտնի ու բարձր որակավորում ունեցող փաստաբաններից էին:

20. Շաբաթաթերթի փաստաբանները մասնավորապես նշեցին, որ դատարանը պարտավոր է ոչ միայն պաշտպանել «ճշմարիտ հավատք» կրոնական կազմակերպության, այլ նաև Շաբաթաթերթի ու լրագրողի իրավունքները: Հանրությունն իրավունք ունի տեղեկացված լինելու Կազմակերպության գործունեությանը, Կազմակերպության անդամների դավանած կրոնին, Կազմակերպության գաղափարախոսությանն ու գործունեության հիմնական սկզբունքներին: Բացի դրանից, որպես լրատվամիջոց, Շաբաթաթերթը ու գլխավոր խմբագիրը ևս ունեն խոսքի ազատության իրավունք և իրավունք ունեն ազատորեն արտահայտելու իրենց կարծիքը, տարածելու գաղափարներ, տեղեկություններ և այլն:

21. Շաբաթաթերթի փաստաբանները պնդեցին նաև, որ հողվածի տպագրումը ոչ մի օրենք չէր խախտելու և, ոչ ոքի վիրավորելու մտադրություն չէր հետապնդելու: Տվյալ դեպքում առնվազն խոսք է գնում երկու կողմերի իրավունքների միջև արդարացի հավասարակշռություն ապահովելուն: Դատարանը, ոտնահարելով Շաբաթաթերթի և լրագրողի խոսքի ազատության իրավունքը, խախտել է այդ հավասարակշռությունը:

22. Բողոք բերած անձի փաստաբանները պնդեցին, որ հողվածը միայն կարծիք է արտահայտում: Նույնիսկ եթե ընդունենք, որ այն քննադատական բնույթ ունի, ապա քննադատությունը վիրավորանք չի հանդիսանում: Իսկ ինչ վերաբերում է հողվածում Փակ ծիսակատարության նկարագրությանը, ապա նախ Շաբաթաթերթը կամ նրա գլխավոր խմբագիրը օրենք չեն խախտել այդ նկարագրությունը տալով և երկրորդ նրանք Կազմակերպության անդամ կամ նրանց կրոնից հետևորդ չեն ու հետևաբար ծիսակատարության ընթացքի գաղտնիությունը պահպանելու ոչ իրավական ու ոչ էլ բարոյական պարտավորություն չունեն:

23. «Ճշմարիտ հավատք» կրոնական կազմակերպությունը վերաքննիչ դատարանում ևս ցանկացավ ներկայացված լինել փաստաբանի կողմից: Սակայն Հայաստանում արտոնագրված փաստաբանները, ում նա դիմեց, հրաժարվեցին Կազմակերպության օգտին ներկայացուցչություն իրականացնելուց: Կազմակերպությունը ստիպված օտարերկրացի փաստաբան հրավիրեց, որին, սակայն, Վերաքննիչ քաղաքացիական դատարանը թույլ չտվեց մասնակցել դատաքննությանը, հիմք ընդունելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որի 17-րդ հոդվածի համաձայն օտարերկրացի փաստաբանը Հայաստանի Հանրապետությունում փաստաբանական գործունեություն իրականացնելու համար պետք է հավատարմագրված լինի Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատում:

24. Կազմակերպությունը գրավոր առարկություններ ներկայացրեց բողոքի դեմ, որտեղ մասնավորապես նշված էր, որ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի վճիռը ամբողջությամբ իրավաչափ է, քանի որ իրենք շարունակում են պնդել, որ հողվածի հրապարակման փաստն ինքնին իր անդամների կրոնից ազատության իրավունքի խախտում է կհանդիսանա:

25. Վերաքննիչ քաղաքացիական դատարանը 2009 թվականի ապրիլի 25-ի իր որոշմամբ բավարարեց վերաքննիչ բողոքն ամբողջությամբ, բեկանեց Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր

իրավասության դատարանի վճիռը և գործով վերջնական որոշում կայացրեց՝ հանելով հողվածի հրապարակման արգելքը:

26. Վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշման մեջ մասնավորապես նշված էր. «Սույն գործով որոշում կայացնելու համար անհրաժեշտ է դիտարկել ինչպես Շաբաթաթերթի խոսքի իրավունքը, այնպես էլ Կազմակերպության ու նրա անդամների կրոնի ազատության իրավունքը: Դատարանի խնդիրը պետք է լինի գտնել այնպիսի արդարացի հավասարակշռություն, որի պայմաններում երկու կողմերի իրավունքներն էլ արդյունավետորեն ու արդարացիորեն կիրականացվեն: Նման պայմաններում, հիմք ընդունելով գործի հանգամանքները և առկա ապացույցները, դատարանը եզրակացնում է, որ հողվածի հրապարակման արգելքը այնպիսի արդարացի հավասարակշռություն չի ապահովում: Հաշվի առնելով այն, որ հողվածի բովանդակությունը վիրավորական բնույթ չի կրում, դրա հրապարակումը չէր կարող Կազմակերպության անդամների կրոնի ազատության իրավունքի խախտում հանդիսանալ, քանի որ այն առավելագույն կարող է որպես քննադատություն գնահատվել: Կրոնական կազմակերպությունը պարտավոր է առավել հանդուրժողական լինել իր գաղափարախոսության ու իր անդամների կրոնական համոզմունքների հանդեպ հնչած քննադատությանը: Առավել ևս, որ հողվածի ենթադրյալ հրապարակումը Կազմակերպությանը անդամներին չէր կարող զրկել իրենց կրոնը դավանելու իրավունքից, ներառյալ իրենց համոզմունքները արտահայտելու, ծիսակատարություններ անցկացնելու հնարավորությունից: Այս առումով Վերաքննիչ քաղաքացիական դատարանը գտնում է, որ հողվածի հրապարակման արգելքը, որպես Շաբաթաթերթի խոսքի ազատության իրավունքի սահմանափակում, իրավաչափ չէ և անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում»:

### ***3) Վարույթը Վճռաբեկ դատարանում***

27. Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2009 թվականի ապրիլի 25-ի որոշումը «Ճշմարիտ հավատք» կրոնական կազմակերպությունը վճռաբեկության կարգով բողոքարկեց 2009 թվականի մայիսի 2-ին:

28. Բողոք բերած անձը պնդեց, որ Վերաքննիչ դատարանը խախտել է մի շարք նյութական և դատավարական նորմեր: Մասնավորապես, բողոք բերած անձը պնդեց, որ Վերաքննիչ քաղաքացիական դատարանը սխալ է մեկնաբանել ու կիրառել Հայաստանի Հանրապետության օրենքները:

29. «Ճշմարիտ հավատք» կրոնական կազմակերպությունը կրկին պնդեց, որ իրենք չեն վիճարկել հողվածի բովանդակության վիրավորական կամ ոչ վիրավորական լինելը: Իրենք միշտ բաց են յուրաքանչյուր քննադատության համար: Սակայն, տվյալ դեպքում, խոսքը գնում է միայն հրապարակման նախապատրաստվող հողվածի մասին այնքանով, որքանով, որ դրանում ներկայացված է նաև Փակ ծիսակատարության նկարագրությունը, ինչն էլ հենց իրենց ուսմունքի ու Սուրբ Գրքի կանոնների համաձայն արգելվում է: Միայն այն հանգամանքը, որ նախապատրաստվող հողվածը պարունակում է տեղեկություններ ու նկարագրություն Փակ ծիսակատարության ընթացքի մասին, արդեն խախտում է իրենց կրոնի հիմունքները՝ վիրավորելով իրենց կրոնական հանգմունքները: Կազմակերպությունը նշեց, որ Վերաքննիչ քաղաքացիական դատարանն, ի տարբերություն ընդհանուր իրավասության դատարանի, չի անդրադարձել այս հանգամանքին, գործի ուղղությունը շեղելով վիրավորանքի առկայության կամ բացակայության փաստին: Հենց այս հանգամանքն էլ «Ճշմարիտ հավատք» կրոնական կազմակերպության կարծիքով, պատճառ է դարձել Վերաքննիչ դատարանի սխալ մեկնաբանությունների ու եզրահանգումների:

30. Այս առումով «Ճշմարիտ հավատք» կրոնական կազմակերպությունը պնդեց, որ խախտվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Մարդու իրավունքների եվրոպական կոմիտեի կողմից երաշխավորված իր անդամների կրոնի ազատության իրավունքը: Վերաքննիչ դատարանը խախտել է նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 19-րդ հոդվածը, քանի որ հնարավորություն չի տվել պաշտպանելու իր անդամների արժանապատվությունը և պատիվը:

31. Կազմակերպությունը Վճռաբեկ դատարանում նաև վիճարկել է իր արդար դատաքննության իրավունքի խախտումը: Մասնավորապես նա պնդել է, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրքը երաշխավորում է դատավորության կողմի իրավունքը դատարանում ներկայացված լինել փաստաբանի կողմից: Բացի դրանից, Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը ևս, երաշխավորելով արդար դատաքննության իրավունքը, ներառում է նաև կողմերի հավասարությունը դատաքննության ընթացքում: Իսկ տվյալ դեպքում Վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշման արդյունքում իրենք հայտնվել են անհավասար դրության մեջ բողոք բերող անձի համեմատությամբ, քանի որ վերջինս դատարանում ունեցել է երեք փաստաբան, իսկ իրենց փաստաբանին դատարանը հնարավորություն չի տվել մասնակցելու նիստին: Դրա արդյունքում իրենք չեն կարողացել դատաքննության ընթացքում պատշաճ պաշտպանել ու ներկայացնել իրենց իրավունքներն ու շահերը, այսինքն կողմերի հավասարության սկզբունքն ու հետևաբար արդար դատաքննության իրենց իրավունքը կոպտորեն խախտվել է:

32. Բողոք բերած անձը, ի նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի դրույթները պնդեց, որ առնվազն առկա է երկու հիմք, որոնց ուժով այս բողոքը պետք է քննվի Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանում: Մասնավորապես, ստորադաս դատարանի առերևույթ դատական սխալը, որը ծանր հետևանքներ է առաջացնում և այն, որ բողոքում բարձրացված հարցը էական նշանակություն ունի օրենքի միատեսակ կիրառման համար, քանի որ կծեկավորի նախադեպ ու դատական պրակտիկա սույն գործում քննվող հարցերի, օրենքների նորմերի ու իրավունքների մեկնաբանման առումով:

33. Վճռաբեկ դատարանն իր որոշմամբ, որը կայացրեց 2009 թվականի մայիսի 14-ին, եզրակացրեց, «... Վերաքննիչ քաղաքացիական դատարանը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելով դատական ակտը, հիմնվելով

դատարան ներկայացված ապացույցների վրա, իրավացիորեն վերաքննիչ բողոքը մերժում է: Նման պայմաններում վճռաբեկ բողոքը քննության ընդունելու վերաբերյալ բողոք բերած անձի հիմնավորումը՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ օրենքի միատեսակ կիրառության տեսանկյունից վճռաբեկ դատարանի որոշման համար էական նշանակություն ունենալու մասին, անհիմն է, քանի որ տվյալ դեպքում հիմնավորված չէ նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտման առկայությունը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա»:

34. Վճռաբեկ դատարանի որոշումից հետո հողվածն, այնուամենայնիվ, տպագրվեց նույն բովանդակությամբ, ինչ որ ի սկզբանե նախատեսվում էր տպագրել:

#### IV. ԴԻՄՈՒՄԱՏՈՒԻ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԱՆՔԻ ՇԱՐԱԴՐԱՆՔԸ

35. Դիմումատուն խնդրում է, որ Եվրոպական դատարանը վճռի և հայտարարի, որ.

ա) Հայաստանի Հանրապետության կողմից հողվածի տպագրությունը չարգելելը առաջացրել է Կազմակերպության անդամների Եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդվածով երաշխավորված կրոնի ազատության իրավունքի խախտում:

բ) Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից Կազմակերպության փաստաբանին նիստին մասնակցել չթույլատրելը հանգեցրել է կողմերի հավասարության սկզբունքի խախտման, քանի որ դիմումատուն դատարանում պատշաճ կարգով ներկայացված չի եղել. հետևաբար խախտվել է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված դիմումատուի արդար դատաքննության իրավունքը:

գ) Հայաստանի Հանրապետությունը խախտել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 14-րդ հոդվածով նախատեսված իր պարտավորությունը, քանի որ Եվրոպական կոնվենցիայի 9-րդ և 6-րդ հոդվածներով երաշխավորված դիմումատուի իրավունքների խախտումները պայմանավորված են եղել Կազմակերպության կրոնական առանձնահատկություններով ու Կազմակերպության անդամների՝ տվյալ կրոնի հետևորդ լինելու հանգամանքով:

36. Հայաստանի Հանրապետության կառավարությունը խնդրում է, որ Եվրոպական դատարանը վճռի և հայտարարի, որ.

ա) Եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդվածի խախտումն առկա չէ, քանի որ Հայաստանի Հանրապետությունը Եվրոպական կոնվենցիայով և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպերով սահմանված իր հայեցողության շրջանակներում հավասարակշռել է արտահատվելու ազատության և կրոնի ազատության իրավունքները:

բ) Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված դիմումատուի արդար դատաքննության իրավունքի խախտումն առկա չէ, քանի որ ինչպես Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանում, այնպես էլ մյուս դատական ատյաններում, դիմումատուն օգտվել է դատարանում իրեն անձամբ պաշտպանելու իրավունքից, իսկ Վերաքննիչ քաղաքացիական դատարանն իր որոշումները կայացնելիս առաջնորդվել է օրենքի տառով:

գ) Եվրոպական կոնվենցիայի 14-րդ հոդվածի խախտումն առկա չէ, քանի որ Եվրոպական կոնվենցիայի 9-րդ և 6-րդ հոդվածներով երաշխավորված դիմումատուի իրավունքների խախտումները պայմանավորված չեն եղել Կազմակերպության կրոնական առանձնահատկություններով ու Կազմակերպության անդամների՝ տվյալ կրոնի հետևորդ լինելու հանգամանքով: